ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2024-11-3-Ա

ք. Երևան 23.10.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի հոկտեմբերի 23-ի նիստում քննարկեց 2024 թվականի հոկտեմբերի 7-ին Ա. Բաբայանի կողմից ներկայացված «Գրանդ քենդի» ՍՊԸ ընկերության (Երևան 0061, Հրանտ Վարդանյան 33, AM) «KIND» (№20232704) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 30-րդ դասի նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող՝ «KINDER» (FERRERO S.p.A. Piazzale Pietro Ferrero 1, 12051 Alba, Cuneo, Italy (IT), N 295, 23.12.1996) և միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «Kinder» (FERRERO S.p.A. Piazzale Pietro Ferrero 1, 12051 Alba, Cuneo, Italy (IT), IR 1034912, 25.02.2010, IR 1375307, 14.04.2017) բառային և համակցված ապրանքային ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 119-րդ կետի և 122-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն բառային ապրանքային նշաններին նման կարող են լինել բառային ապրանքային նշանները և համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր: Տվյալ դեպքում համեմատվող նիշերն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել նիշերից մեկը մյուսի մեջ մտնելով, այն է՝ ներկայացված «KIND» բառային ապրանքային նշանն ամբողջությամբ ներառված է գրանցված համակցված և բառային ապրանքային նշանների՝ KINDER բառի մեջ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 30-րդ դասի նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող՝ «KINDER» (FERRERO S.p.A. Piazzale Pietro Ferrero 1, 12051 Alba, Cuneo, Italy (IT), N 295, 23.12.1996) և միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «Kinder» (FERRERO S.p.A. Piazzale Pietro Ferrero 1, 12051 Alba, Cuneo, Italy (IT), IR 1034912, 25.02.2010, IR 1375307, 14.04.2017) բառային և համակցված ապրանքային նշաններին:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է և բողոքը պետք է մերժել:

Բողոքարկողի ներկայացուցիչը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Ա. Բաբայանի կողմից ներկայացված «Գրանդ քենդի» ՍՊԸ ընկերության «KIND» (No20232704) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ